ԷՋՄԻԱԾԻՆԸ՝ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՆ

Էջմիածինը,
արդ, այսօր դարձած
հարության խորան,
Փառավորում է քո Հարությունը
Հայկյան աշխարհում։
Հայոց աշխարհի բոլոր տեղերում
Դարձել է իրոք երգ սիրասնունդ
և հիանալի։
Հայոց երկրի բոլոր կողմերում
Համեղաճաշակ տաղ է այն դարձել։
Լուսավորվել է Էջմիածինը՝
ցնծության ձայնով օրհնում է Աստծուն,
Լուսավորվել է Էջմիածինը՝
և տարածում է լուրը խնդության,
Լուսավորվել է Էջմիածինը՝
լուսապայծառ հրեշտակի հանգույն,
Լուսավորվել է Էջմիածինը՝
Երուսաղեմի տաճարի նման,
Լուսավորվել է Էջմիածինը՝
մաքրափայլ կարդի քնքուշ շողանքով,
Լուսավորվել է Էջմիածինը՝
լուսապարդ խաչի շողարձակումով,
Լուսավորվել է Էջմիածինը՝
լուսավորչաձև կանթեղի նման,
Լուսավորվել է Էջմիածինը՝
հավերժ ղողանջող
տարբ կանգի հանգույն,
Լուսավորվել է Էջմիածինը՝
մշտնջենաբուխ ավազանի պես,
Լուսավորվել է Էջմիածինը՝
մարգարեների վառ տեսիլքներով,
Լուսավորվել է Էջմիածինը՝
առաքյալների տիրական ձայնով,
Լուսավորվել է Էջմիածինը՝
օրհնյալ սրբերի փառապսակով,
Եվ օրհնաբանում սաղմոսերգությամբ,
Օրհնում քնարով, տավղով, ծնծղայով
Սուրբ և կենարար Լույսը Հարության։

Ա. Ե.Ա.